Կարգապահական գործ թիվ ԿԳ-17149

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մարտի 06-ի թիվ 56-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/41-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀՐԱՆՏ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, **Խորհրդի անդամներ՝** Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հրանտ Դավթյանին (արտոնագիր՝ թիվ 521) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Դպրոց) կողմից 30.10.2017թ. ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հրանտ Դավթյանը (արտոնագիր՝ թիվ 521) 2017թ-ի առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 07.11.2017թ. թիվ 399-Ա/ԿԳ-17149 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Հրանտ Դավթյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

14.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի մարտի 06-ին, ժամը՝ 19:18-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Հրանտ Դավթյանը բացատրություն չի ներկայացրել: Փաստաբան Հրանտ Դավթյանը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 2017թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Դպրոցի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել է 103 (մեկ հարյուր երեք) վերապատրաստման դասընթաց:

Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի և վերապատրաստման հարցերով համակարգողի 19.12.2017թ. տեղեկանքով:

2) 2017թ-ի առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

Նշված փաստը հաստատվում է Դպրոցի 30.10.2017թ. տեղեկանքով:

3) Փաստաբան Հրանտ Դավթյանի նկատմամբ սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով նախկինում կարգապահական վարույթ չի հարուցվել:

Նշված փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 19.12.2017թ. տրամադրված տեղեկանքով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 19.12.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հրանտ Դավթյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված Պալատի նախագահի առաջին տեղակալի 07.11.2017թ. թիվ 399-Ա/ԿԳ-17149 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հրանտ Դավթյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) դրույթներով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի

համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ... 4.1) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.5 կետի 24-րդ ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին հաստատում է փաստաբանների վերապատրաստման կարգը*:

Կանոնագրքի 2.8.2 ենթակետը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Կարգի 1-ին կետի համաձայն՝ *կարգը սահմանում է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը, ժամկետները, ժամերի հաշվարկը, պատասխանատվության, հաշվետվողականության, ինչպես նաև վերապատրաստման հետ կապված այլ հարաբերությունները*:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը՝ Կարգով նախատեսված ժամկետում և ընթացակարգով, պետք է անցնի 12 (տասներկու) ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Կարգի 27-րդ կետի համաձայն՝ *կարգը խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով:*

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել, իսկ Պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին, սահմանում է փաստաբանների վերապատրաստման կարգը և ժամաքանակը: Սահմանված ժամկետում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Հրանտ Դավթյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս, խախտելով Կարգի վերոնշյալ կանոնը, 2017թ. առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ 2017 թվականի հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին Պալատը կազմակերպել է 103 (մեկ հարյուր երեք) վերապատրաստման դասընթաց (չհաշված առցանց վերապատրաստման դասընթացները): Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա դասացուցակները հաստատվել և տեղադրված են եղել Պալատի կայքում:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Հրանտ Դավթյանն օբյեկտիվորեն ունեցել է հնարավորություն հաշվետու ժամանակահատվածում անցնելու տվյալ կիսամյակի համար պարտադիր 12 (տասներկու) ակադեմիական ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները, սակայն չի կատարել օրենքով

նախատեսված պարտականությունը և խախտել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի և Կարգի 8-րդ կետի պահանջները:

Նման պայմաններում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հրանտ Դավթյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Խորհուրդը կարգապահական տույժ կիրառելիս հաշվի է առնում այն հանգամանքը, որ փաստաբան Հրանտ Դավթյանն այլ կարգապահական գործերով չմարված տույժեր չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև Կարգի պահանջներով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Հրանտ Դավթյանին (արտոնագիր՝ թիվ 521) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Հրանտ Դավթյանի (արտոնագիր՝ թիվ 521) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հրանտ Դավթյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

06 մարտի 2017թ.
թիվ ԿԳ/41-Ա
ք. Երևան